

«ՀԱՅ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԵՐ»

Թիւ 21

ՆՈՐ ԶՈՒՂԱ

Հայկական մշակոյթը ծանօթ է իր ինքնատիպ եւ հարուստ դրսեւորումներով, սակայն պէտք է միշտ նկատի ունենալ, որ պատմական իրավիճակների բերումով այն շատ յաճախ իր արտայայտութիւնն է գտել նրա աշխարհագրական սահմաններից դուրս, մեծապէս նպաստելով ինչպէս հայկական, այնպէս էլ օտար քաղաքակրթութիւնների զարգացմանն ու նորակերտմանը: Անցեալ ժամանակաշրջանների պատմական իրադրութիւնները, որոնք թելադրուած էին քաղաքական եւ կրօնական դրդապատճառներից, բերեցին այնպիսի մի վիճակի, որ անհրաժեշտութիւն առաջացաւ ազգային ինքնութիւնը, աւանդներն ու մշակոյթը չկորցնելու եւ ազգային տարրը գոյապահպանելու նպատակով, հիմնել ու զարգացում տալ այն գաղթօջախներին, որոնք յաճախ, բախտի քմահաճոյքով, բաժին էին հասել մեր նախնիքներին: Ունենալով իւրայատուկ բնազդ, առեւտրական գործի հմտութիւն, հարուստ մշակութային աւանդներ, դիւանագիտական իմաստութիւն եւ ինքնութիւնը պահպանելու ու բազմապատկելու կարողութիւն, հեռաւոր Արեւելքից մինչեւ Արեւմուտք, դարերի ընթացքում, հիմնուել ու բարգաւաճում են ապրել բազմաթիւ հայ համայնքներ, գաղթօջախներ: Այս երեւոյթի առանձնայատուկ կողմերից կարեւորագոյնը, թերեւս եղել է հայ մշակոյթի պահպանումը տեղի աւանդոյթների եւ՝մտածողութեան անխուսափելի օգտագործման միջոցով:

Այս մեկնաբանութիւնը միանգամայն ընդունելի է Իրանական իրականութեան համար եւ առիթ է ընծայում, որպէսզի այս երեւոյթը ուսումնասիրուի, քննարկուի եւ մեկնաբանուի: Շնորհաշատ այս նախաձեռնութեամբ է որ 70ական թուականներին մեծ դժուարութիւններով, իսկ յետագայում նաեւ Իրանական իսլամական Հանրապետութեան օժանդակութեամբ՝ սկսուել են պարբերական ու աչալուրը ուսումնասիրութիւններ՝ Պարսկահայքում եւ Ատրպատականում: Ծարտ. Արմէն Հախնազարեանը իր խմբով եւ Վենետիկի Հայ Մշակոյթի Ուսումնասիրման ու Վաւերագրման Կենտրոնը՝ տնօրէն ճարտ. Պրոֆ. Ադրիանոյ Ալպազոյ Նովելլոն, տարիներէ ի վեր կազմակերպում են

գիտարչական, որոնց նպատակն է եղել ուսումնասիրել, չափադրել, լուսանկարել եւ պատմական տեղեկութիւններ հաւաքել Իրանի հիւսիսային շրջանում, յատկապէս Մակու, Զուղա, Խոյ, Մարանդ, Սոֆլան, Թաւրիզ, Արդաբիլ քաղաքների, Ուրմիոյ լճի աւազանի, ինչպէս նաեւ իրանահայ վերջին գաղթօջախ՝ Սպահանի մօտ գտնուող Նոր Զուղայի վերաբերեալ:

Պէտք է նշել, որ մինչեւ օրս կատարուած եւ գիտական շրջանակներին ներկայացուած աշխատութիւնները, որոնք վերաբերում են մեծ մասամբ պատմիչների թողած յիշատակութիւններին, ճամբորդների տպաւորութիւններին, գաղթօջախի կրթական եւ հասարակական պատմութեանը, չեն կարող գոհացուցիչ համարուել առանց քաղաքաշինական եւ ճարտարապետական մեկնաբանութիւնների: Այս նկատառումներով կատարուած արդի ուսումնասիրութիւններից կարելոյ է նշել հետազօտող Զոն Քարշվելի, 1968 թվ. Օքսֆորդում հրատարակուած NEW JULFA, The Armenian Churches and other buildings, Clarendon Press-Oxford (Նոր Զուղա, Հայկական եկեղեցիները եւ այլ կառոյցները) աշխատութիւնը եւ 1974 թվ. Հռոմում հրատարակուած Կարապետ Կարապետեանի Isfahan, New Julfa, Le case degli Armeni (Սպահան, Նոր Զուղա, Հայերի տները) գրքերը: Առաջինում մեկնաբանուած են Նոր Զուղայի կարելոյ վանական համալիրները, եկեղեցիները, որոնք ներկայացուած են չափադրութիւններով, լուսապատկերներով, արձանագրութիւնների վերծանումներով: Առանձին բաժին յատկացուած է կիրառական արուեստին, որմնակարգութեանը եւ հասարակական բնոյթի կառոյցներին: Երկրորդ գիրքը նուիրուած է հայերի կողմից Նոր Զուղայում կառուցուած բնակելի համալիրներին: Հեղինակի կողմից կատարուած է քաղաքի «Հայկական թաղամասի» քաղաքաշինական եւ պատմական վերլուծութիւնը, չափադրութիւնների ու լուսանկարների միջոցով վերլուծուած են շուրջ 13 հայկական անուններ ունեցող (Յովսէփ Ամիր Խան, Տէր Գրիգոր, Մինաս Կրետ, Իվաջա Վոսկան, Աղանուր) տների ճարտարապետա-շինարարական յատկանիշները: Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում հեղինակի կողմից կատարուած բնակելի տների տիպաբանական վերլուծութիւնները եւ քաղաքաշինական յատակագծման փուլային զարգացմանը նուիրուած հետազօտութիւնները:

Հայ շինարարների եւ քարգործ վարպետների թողած ժառանգութիւնը Իրանում այնքան մեծանորհ է, որ անհրաժեշտութիւն առաջացաւ, տարիների ընթացքում հաւաքուած հարուստ նիւթի հիման վրայ, մտածել շարունակաբար հրատարակել այս ընդարձակ տարածքով մէկ սփռուած հայկական վանքերի ու եկեղեցիների վերաբերեալ գիտական ուսումնասիրութիւններ: Այսօր կարող ենք ասել, որ Զոն Քարշվելի եւ Կարապետ Կարապետեանի գրքերի կողքին, կան Օ. Մ.

EDIZIONI) ընկերակցութեան կողմից հրատարակուած՝ թիւ 4, Սբ. Թադէի Վանք (Վեն. 1974 թվ.), թիւ 10 Սբ. Ստեփանոս (Վեն. 1980 թվ.), թիւ 20 Սոհրուլ (Վեն. 1988 թվ.) նմոյշազրբերը:

17-18 դդ. Իրանում գոյատեւած հայկական այս վերջին գաղթօջախի պատմութիւնը սկիզբ է առնում 1603 թվ., երբ Շահ Աբբաս Ա. բռնազաղթի է ենթարկում հայերին եւ Զուլֆայից տեղափոխում Սպահանի արուարձանները:

Բռնի ուժով կատարուած այս գործողութեան նպատակն էր ամրապնդել կայսրութեան մայրաքաղաքը, այն դարձնելով առեւտրի եւ մշակոյթի խոշոր կենտրոն: Քաջատեղեակ լինելով հայերի առեւտրական, արհեստագիտական, ճարտարագիտական ու շինարարական ունակութիւնների մասին, 1615 թվ. Շահ Աբբաս Ա. բռնազաղթուածներին նուիրում է Զաենդերուդ գետի աջակողմեան ընդարձակ տարածքները տալով հայերին, «ազատ քաղաքացիներին» կարգավիճակ եւ ինքնակառավարում: Այս տարածքներում շուտով նախագծուում եւ կառուցապատուում է մի առանձին թաղամաս, որն ունէր կանոնաւոր յատկազօնում բաժնուած առանձին հատուածների՝ ըստ գերդաստանների: Նոր Զուղայում առաջանում են Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Երեւան, Թաւրիզ Գազգի եւ այլ անուններ կրող թաղամասեր: 1620ական թուականներին Նոր Զուղան ունէր արդէն 30.000 հայ բնակիչ եւ իրեն իրաւասութեան տակ էր պահում Իրանական 8 նահանգների 74 հայաբնակ բնակավայրեր: Ըստ պատմական տեղեկութիւնների, 17րդ դարում Պախտիարի, Համատանի, Ղազուխի ու Նոր Զուղայի տարածքներում, բնակւում էին 300.000 բռնազաղթուած հայեր: 1630 թվ. Նոր Զուղան դառնում է արդէն մեծ համբաւ վայելող մշակոյթի կարեւոր կենտրոն: Այստեղ կառուցւում են տպարաններ (1607 թվ. Խաչատուր Կեսարացին հրատարակում է առաջին գիրքը Սբ. Ամենափրկիչ վանքում հիմնած տպարանում), վարժարաններ, դպրոցներ, կառուցւում են նշանաւոր վանքեր, եկեղեցիներ, որպիսիք են՝ Սբ. Գէորգը (1611 թվ.), Սբ. Աստուածածինը (1613 թվ.), Սբ. Կատարինէն (1623 թվ.), Սբ. Բեթղէհէմը (1628 թվ.), Սբ. Գրիգոր Լուսաւորիչը (1638 թվ.), Սբ. Ամենափրկիչը (1664 թվ.):

Ճարտարապետական տեսակէտից Նոր Զուղայի եկեղեցական կառոյցները ունեն գմբեթաւոր դահլիճ եւ քառամոյթ բազիլիկ յօրինուածքներ, որոնք բնորոշ են այս շրջանի հայկական վանքային համալիրների ու եկեղեցիների համար: Որպէս առանձնայատկութիւն հարկ է նշել, որ զիւսաւոր խորանը այս յուշարձաններում չըջանազծի մէջ ներգծուած հնգանիստ է, պարագծուած փոքր խորութիւն ունեցող եւ սլաքաձեւ վերնամասով պսակւող խորշերից: Խորանները շատ յաճախ ամփոփւում են սահուն մակերես ունեցող գմբեթարդներով, որոնք կրկնում են այս ազատ գծազրելու ձեւը նաեւ արտաքուստ:

Գմբեթատակ քառակուսու անցումը թմբուկին, մեծամասամբ իրականացուած է առաքաստային անցումով, որի եռանկիւնաձեւ, երկկոր մակերեւոյթը մասնատուում է առանձին շեղանկիւնների եւ անկիւնադծային առանցքով բաժանուում երկու կամ չորս հարթութիւնների: Գլխաւոր խորանները հիւսիսից եւ հարաւից ունեն ուղղանկիւն, թաղակապ աւանդատներ, որոնց մուտքերը իրականացուած են եկեղեցու սրահից: Եկեղեցիների ներքին մակերեւոյթները մշակուած են արեւելեան ոճի մանրանկարներով եւ մեծ համբերութեամբ կատարուած հիւսքանչ խճապաստառներով:

Եթէ եկեղեցական կառոյցների յատկազօծային յօրինուածքները, պարսպապատ, օժանդակ կառոյցներ պարունակող վանքապատական տարածքների յատկազօծումն ու սկզբունքները արտայայտում են զուտ հայկական մտածողութիւն, ապա այս նկատաւումը բոլորովին ուրիշ լուծում է ստանում կառոյցների արտաքին դեկորատիւ յարդարանքի եւ ծաւալա-տարածական արտայայտութիւնների մէջ: Այս դէպքում տեղացի հայ շինարարները ցանկացել են միաձուլել հայկականը եւ իրանականը, նոր արտայայտչամիջոցներ գտնել, որի նպատակն է եղել ստեղծել ներդաշնակ ճարտարապետական միջավայր, ելնելով տեղի աշխարհազրուութիւնից եւ արդէն որոշ իմաստով կազմաւորուած քաղաքաշինական իրավիճակից: Թերեւս այս նպատակով է, որ եկեղեցիների արտաքին ընկալումը շատ կոթողային արտայայտութիւն ունի, որն արտացոլում է սրահների, բազիլիկների երկրաչափական մաքուր ծաւալները, իսկ կառոյցը պսակող եւ սովորաբար գերակշռող հանդիսացող թմբուկն ու վեհարը, ստանում են աւելի պլաստիկ եւ տարածքային ըմբռնումով երկրորդական դեր: Այս ամէնը, անշուշտ հարստացնում եւ ինքնատիպ է դարձնում ճարտարապետութիւնը, որն անկասկած տեղի շինարարների ու վարպետների տաղանդի, նորարարութեան արգասիք է:

Ընթերցողին ներկայացուող «Հայ ճարտարապետութեան Վաւերագրեր» մատենաշարքի թիւ 21 «Նոր Զուղա» հատորը, հարազատ է մնում շարքի սկզբունքներին ու կառուցուածքին: Գիրքը պարունակում է հարուստ չափադրական, լուսանկարչական, մատենագիտական, պատմական բարձրարժէք նիւթեր: 123 էջանոց այս բարձրորակ հրատարակութիւնը հեղինակել են Ճարտ. Արմէն Հախնազարեան՝ Ախսենի «Հայկական Ճարտարապետութիւնը Ուսումնասիրող Կազմակերպութիւն»ից (RAA), Վահան Մեհրաբեանը, որոնց գրչին է պատկանում «Նոր Զուղայի պատմա-նկարագրական ակնարկները», «Նոր Զուղայի պատմա-ճարտարապետական հայկական ժառանգութիւնը» յօդուածները: Հատորում տեղ են գտել նաեւ «Նոր Զուղայի հայկական համայնքի համառօտ ժամանակազրուութիւնը» յօդուածը, հեղինակ՝ Հերման Վահրամեան, որն նաեւ գրքի խմբագիրն է եւ նկարչական ձեւա-

ւորողը, Լեւոն Մինասեանի կողմից կազմուած մատենագիտութիւնը եւ շուրջ 53 արձանագրութիւնների վերծանմանն նուիրուած աշխատութիւնը անգլերէն եւ իտալերէն թարգմանութիւններով հանդերձ: Գիրքը պարունակում է 74 գունաւոր լուսապատկերներ, 12 վանքային համալիրների եւ եկեղեցիների 48 չափագրութիւններ, մեծ մասամբ իրականացուած հեղինակային խմբի կողմից եւ Նոր Զուղա քաղաքի «Հայկական Թաղամասի» երկու սխեմատիկ յատակագծեր: Հատորը եռալեզու է. հայերէն, անգլերէն եւ իտալերէն:

Իրանահայ համայնքի նշանաւոր կենտրոն Նոր Զուղա քաղաքի եկեղեցական ճարտարապետութեանը նուիրուած այս կարեւոր աշխատութիւնը յոյս է ընծայում, որ յետագայում եւս հնարաւորութիւններ կը ստեղծուեն լուսաբանելու, ուսումնասիրելու եւ մեկնաբանելու հայկական մշակոյթի անբաժան մասը կազմող, սակայն մինչեւ օրս դեռեւս քիչ քննարկուած, հայկական բազմաթիւ գաղթօջախների թողած հարուստ ազգային ժառանգութիւնը:

Ճարտ. ԱՐԱ ԶԱՐԵԱՆ